ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 04/2025-Շ/Վ
ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 3 նոյեմբերի 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի կողմից շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով 2025 թվականի օգոստոսի 4-ին հարուցված N 04/2025/Շ/Վ վարույթի նյութերը.

Պարզեց

Նախապատմություն

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով «hetq.am» լրատվականի՝ ««Սխալմունքներ» Նոյեմբերյան համայնքում»» վերտառությամբ հրապարակման ուսումնասիրության հիման վրա 2025 թվականի օգոստոսի 4-ին կայացրել է Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի կողմից շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու մասին N 04/2025/Շ/Վ որոշումը:

1.2 Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արսեն Աղաբաբյանը Նոյեմբերյան համայնքի ղեկավար է դարձել «Ապրելու երկիր» կուսակցության համամասնական ցուցակով:

Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի 2024-ի մարտի 14-ի որոշմամբ համայնքի բյուջեից 180 հազար դրամ է տրամադրվել «Կամո Մամյան» ԱՁ-

ին: Փոխանցման նպատակը հանդիսացել է Նոյեմբերյան քաղաքում «Ապրելու երկիր» կուսակցության հանդիպման համար անհրաժեշտ միջոցառման ծախսերի ապահովումը: Ըստ որոշման՝ հանդիպումը եղել է նույն տարվա փետրվարի 21-ին:

Արսեն Աղաբաբյանի կողմից լրատվականին տրված պարզաբանման համաձայն՝ փոխանցումը պայմանավորված է եղել «Ապրելու» բարեգործական հիմնադրամի հիմնադիրների հետ հանդիպման նպատակով նախատեսված միջոցառման ծախսեր կատարելու անհրաժեշտությամբ, սակայն նշված որոշման մեջ տեղի ունեցած փաստաթղթային ձևակերպման սխալմունքի արդյունքում գրվել է «Ապրելու երկիր» կուսակցություն:

1.3 2025 թվականի օգոստոսի 5-ին վարույթ հարուցելու մասին որոշումն ուղարկվել է Արսեն Աղաբաբյանին և պահանջվել է գրությունն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում վարույթում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել գրավոր պարզաբանում՝ դրան կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

1.4 2025 թվականի օգոստոսի 8-ին Արսեն Աղաբաբյանն ստացել է որոշումը և 2025 թվականի օգոստոսի 19-ին ներկայացրել է գրավոր պարզաբանում:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը և պարզաբանումը

2025 թվականի օգոստոսի 19-ին Հանձնաժողով մուտքագրված գրությամբ Արսեն Աղաբաբյանը ներկայացրել է գրավոր պարզաբանում (այսուհետ Պարզաբանում), որով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«(…) իմ՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 14 մարտի 2024 թվականի թիվ 863-Ա որոշման նկարագրական հատվածում տեխնիկական սխալի հետևանքով նշվել էր «Ապրելու երկիր» կուսակցություն» բառերը, մինչդեռ իրականում և միջոցառումը և համայնքի ղեկավարի 14 մարտի 2024 թվականի թիվ 863-Ա որոշումը վերաբերել է «Ապրելու» բարեգործական հիմնադրամին: Սխալը պայմանավորված է տեքստի ձևակերպման փուլում կատարված տեխնիկական վրիպումով, որն ուղղվել է իմ՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1606-Ա որոշմամբ: Այդ որոշմամբ՝ նախկին որոշման մեջ «Ապրելու երկիր»

կուսակցություն ձևակերպումը փոխարինվել է փաստացի և իրավաբանորեն հիմնավորված՝ «Ապրելու» բարեգործական հիմնադրամ» ձևակերպմամբ:

Ցանկանում եմ ընդգծել, որ գործողությունների ամբողջ շղթան եղել է թափանցիկ և բխել է հանրային շահի գերակայությունից՝ առանց որևէ շահերի բախման հիմքի: «Ապրելու» բարեգործական հիմնադրամը բազմաթիվ բարեգործություններ և ներդրումներ է կատարել Նոյեմբերյան համայնքում: Այդ համատեքստում կազմակերպված փոքրածավալ միջոցառումը՝ ընդամենը 180.000 ՀՀ դրամի ծախսով, ունեցել է բացառապես գործնական և հանրային նպատակ՝ խթանել հետագա ներդրումների և նոր բարեգործական նախաձեռնությունների իրականացումը:

Մասնավորապես՝

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքում սուբվենցիոն ծրագրերով նախատեսված աշխատանքների համար ֆինանսավորման նպատակով տրվել է 112,500,000 ՀՀ դրամ գումար, որը Նոյեմբերյան համայնքի ավագանու 28.10.2022 թվականի թիվ 184-Ա որոշմամբ ընդունվել է Նոյեմբերյան համայնքի բյուջե:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքին նվիրաբերվել է սանմաքրման և մայթերի լվացման աշխատանքներ իրականացնելու համար պահանջվող լվացող միջոցներ: Նոյեմբերյան համայնքի ավագանու 22.11.2022 թվականի թիվ 191-Ա որոշմամբ սարքավորումներն ընդգրկվել են Նոյեմբերյան համայնքին պատկանող գույքի ցանկում:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքին նվիրաբերվել է համայնքի քաղաքային մարզադաշտի համար նախատեսված 190 հատ նստարան, որը Նոյեմբերյան համայնքի ավագանու 27.10.2023 թվականի որոշմամբ, ընդգրկվել է Նոյեմբերյան համայնքին պատկանող գույքի ցանկում:

- «Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից թվով 6 միկրոավտոբուսներ, միջհամայնքային տրանսպորտ օգտագործելու նպատակով անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվել են համայնքին, որը ձևակերպվել է Նոյեմբերյան համայնքի ավագանու 29.11.2024 թվականի թիվ 596-Ա որոշմամբ:

- «Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից, որպես սեփականություն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի Ռ.Սևակի փողոցում

գտնվող ընդհանուր օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցների կանգառը, որի գինը կազմում է 8.827.480 (ութ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, փոխանցվել է համայնքին:

Այս բոլոր գործողությունները վկայում են այն մասին, որ համայնքի և հիմնադրամի միջև առկա է կայուն և արդյունավետ համագործակցություն, որի նպատակը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումն է:

Ես՝ որպես համայնքի ղեկավար, գործել եմ բացարձակ թափանցիկությամբ, հանրային շահի սկզբունքին համապատասխան, և որևէ կերպ չեմ մասնակցել այնպիսի գործողությունների, որոնք կարող էին առաջացնել շահերի բախման կամ կոռուպցիոն ռիսկերի հիմք: Ինչպես նշվեց, Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 14 մարտի 2024 թվականի թիվ 863-Ա որոշման նկարագրական մասում սխալ ձևակերպման պատճառով առաջացել է թյուրըմբռնում, ինչն էլ հիմք է հանդիսացել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու համար: Ներկայումս շտկվել է նաև սխալ ձևակերպումը, ինչը հիմք է հանդիսանում հարուցված վարույթը կարճելու համար: Ուստի, պնդում եմ, որ փաստացի «Ապրելու երկիր» կուսակցության հանդիպման համար անհրաժեշտ միջոցառման որևէ ծախս չի կատարվել համայնքի բյուջեից, ինչն ապացուցվում է նաև Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 13.08.2025 թվականի 1606-Ա որոշումով: Հետևաբար գտնում ենք, որ սխալ ձևակերպման համար անձին պատասխանատվության ենթարկելու մոտեցումը հակասում է բազմակողմանիության, իրավական որոշակիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքներին: Քանի որ 14.03.2024թ. թիվ 853-Ա որոշման նկարագրական հատվածում առկա սխալը եղել է ակնհայտ տեխնիկական վրիպակ, որը ոչ միայն շտկվել է նույն պաշտոնատար անձի՝ համայնքի ղեկավարի կողմից, այլ նաև դրա հիմքով իրականում որևէ ոչ իրավաչափ գործողություն չի կատարվել, ապա տվյալ հանգամանքը չի կարող մեկնաբանվել որպես շահերի բախման փաստական դրսևորում:

Ավելին՝ ինչպես վերը ներկայացվեց, «Ապրելու» բարեգործական հիմնադրամը եղել է համայնքի իրական գործընկերը, որի միջոցով համայնքը ստացել է միլիոնավոր դրամների ներդրում, նյութական աջակցություն և բարելավված ենթակառուցվածքներ:

Նման համագործակցության ամրապնդմանն ուղղված փոքրածավալ միջոցառման ֆինանսավորումը համայնքի կողմից ոչ միայն արդարացված է, այլև բխում է հանրային շահից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

Խնդրում եմ

-դիտարկել ներկայացված պարզաբանումները ողջ համատեքստում,

-արձանագրել, որ տվյալ դեպքում չկա շահերի բախման որևէ փաստական հիմք և վարույթը կարճել՝ շահերի բախման փաստի բացակայության հիմքով:»:

3. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1. Նոյեմբերյան համայնքի պաշտոնական կայքի տվյալների համաձայն 2021 թվականի դեկտեմբերի 24-ից մինչ օրս Արսեն Աղաբաբյանը զբաղեցնում է համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսանում է «Ապրելու երկիր» կուսակցության անդամ (https://noyemberyan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=302247b9-47d6-40f5-b85d-95fc8c0b4d03):

3.2 Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 853-Ա որոշման համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 21-ին Նոյեմբերյան քաղաքում «Ապրելու երկիր» կուսակցության հանդիպման կազմակերպման համար նախատեսված միջոցառման ծախսերի կատարման նպատակով Նոյեմբերյան համայնքի 2024 թվականի բյուջեից 180.000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումար է փոխանցվել «Կամո Մամյան» ԱՁ-ին:

3.3 Սույն վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով է ներկայացվել որոշում, համաձայն որի ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 853-Ա որոշման նախաբանում արձանագրված տեխնիկական սխալի ուղղման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1606-Ա որոշմամբ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 853-Ա որոշման նախաբանում ««Ապրելու երկիր»

կուսակցության» բառակապակցությունը փոխարինվել է ««Ապրելու» բարեգործական հիմնադրամ» բառակապակցությամբ:

4. Շահերի բախման վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:

4.2 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:***

4.3 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.4 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

4.5 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.6 Նույն հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:

4.7 Միաժամանակ նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի առնչությամբ շահերի բախման իրավիճակի առկայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության կապակցությամբ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

4.8 Նույն հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ Օրենքով նախատեսված դեպքերում սույն հոդվածով սահմանված դրույթների խախտումն առաջացնում է վարչական կամ կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է (...),

համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, (...) շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը:

4.10 Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝

(...)

2. **լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.**

(...) :

5. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Հանձնաժողովը իրականացնելով վարույթում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմի վերլուծություն, արձանագրում է հետևյալը.

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարականի, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հանրային ծառայության շահերի բախման իրավիճակների կառավարման մասին ուղեցույցում շահերի բախումը բնութագրում է հետևյալ կերպ՝ շահերի բախումն ընդգրկում է հանրային ծառայողի մոտ հանրային պարտականությունների և մասնավոր շահերի կոնֆլիկտը, որտեղ հանրային ծառայողն ունի մասնավոր շահ, որը կարող է անտեղի ազդեցություն ունենալ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների իրագործման վրա: Եթե շահերի բախման իրավիճակները պատշաճորեն չնույնականացվեն և կառավարվեն, ապա դրանք կարող են լրջորեն

վտանգել կազմակերպությունների բարեվարքությունը և հանգեցնել կոռուպցիայի ինչպես հանրային ոլորտում, այնպես էլ մասնավոր:

ՏՀԶԿ-ի կողմից պոտենցիալ շահերի բախումը նկարագրվում է, որպես մի իրավիճակ, երբ պաշտոնատար անձի ունեցած մասնավոր շահերն ապագայում որոշակի հանգամանքների փոփոխության արդյունքում կարող են ազդեցություն ունենալ վերջինիս պաշտոնեական գործունեության վրա:

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում» հուշագրում սահմանվում են շահերի բախման քաղաքականության նպատակները և խնդիրները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ, շահերի բախման քաղաքականությունները չպետք է միայն լինեն շահերի բախման կանխարգելման գործիք:

Դրանք պետք է նաև՝

- մեծացնեն վստահությունը կառավարության նկատմամբ,
- ցուցադրեն ընտրված ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց բարեվարքության բարձր մակարդակը,
- կանխարգելման շահերի բախման ի հայտ գալը, քանի որ պաշտոնական գործողությունները ենթակա կլինեն հանրային հսկողության,
- պետական պաշտոնավորումից հետ պահեն այնպիսի անձանց, որոնց անձնական ֆինանսական միջոցները ենթակա չեն հանրային հսկողության,
- հանրության ավելի մեծ հնարավորություն ընձեռեն պետական պաշտոնատար անձանց կատարողականի մասին դատելու՝ վերջինների արտաքին ֆինանսական շահերի լույսի ներքո:

Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև ՏՀԶԿ-ն շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև ***հավանական և թվացյալ*** շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ մեկնաբանության՝ հավանական և թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը: ***Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև հանրային ընկալումները:*** ՏՀԶԿ-ն առաջարկում է,

որ ***հավանական և թվացյալ*** շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի բարեվարքությանը:

Սույն վարույթի շրջանակում պարզվել է, որ «Ապրելու երկիր» կուսակցության անդամ, Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 853-Ա որոշմամբ 2024 թվականի փետրվարի 21-ին Նոյեմբերյան քաղաքում «Ապրելու երկիր» կուսակցության հանդիպման կազմակերպման նպատակով նախատեսված միջոցառման ծախսերի կատարման համար Նոյեմբերյան համայնքի 2024 թվականի բյուջեից «Կամո Մամյան» ԱՁ-ին փոխանցվել է 180,000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

2025 թվականի օգոստոսի 19-ին Արսեն Աղաբաբյանի կողմից ներկայացված պարզաբանման պարզվել է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 14 մարտի 2024 թվականի թիվ 863-Ա որոշման նկարագրական հատվածում տեխնիկական սխալի հետևանքով նշվել էր «Ապրելու երկիր» կուսակցություն» բառերը, մինչդեռ իրականում և միջոցառումը և համայնքի ղեկավարի 14 մարտի 2024 թվականի թիվ 863-Ա որոշումը վերաբերել է «Ապրելու» բարեգործական հիմնադրամին:

Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1606-Ա որոշմամբ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 853-Ա որոշման մեջ առկա տեխնիկական սխալն ուղղվել է՝ որոշման նախաբանում ««Ապրելու երկիր» կուսակցության» բառակապակցությունը փոխարինվել է ««Ապրելու» բարեգործական հիմնադրամ» բառակապակցությամբ:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

Տվյալ դեպքում, Արսեն Աղաբաբյանի կողմից ընդունված որոշմամբ հնարավոր արտոնության տրամադրման հանգամանքի գնահատման տեսանկյունից Հանձնաժողովը կարևոր է համարում անդրադառնալ «Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքում իրականացված բարեգործական միջոցառումներին՝ մասնավորապես համայնքի տարբեր ոլորտներում իրականացված ներդրումներին, որոնք ուղղված են եղել համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը և սոցիալական խնդիրների լուծմանը, ինչը կարող է նշանակություն ունենալ շահերի բախման առկայության կամ բացակայության գնահատման համար: Այսպես.

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքում սուբվենցիոն ծրագրերով նախատեսված աշխատանքների համար ֆինանսավորման նպատակով տրվել է 112,500,000 ՀՀ դրամ գումար, որը Նոյեմբերյան համայնքի ավագանու 28.10.2022 թվականի թիվ 184-Ա որոշմամբ ընդունվել է Նոյեմբերյան համայնքի բյուջե:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքին նվիրաբերվել է սանմաքրման և մայթերի լվացման աշխատանքներ իրականացնելու համար պահանջվող լվացող միջոցներ: Նոյեմբերյան համայնքի ավագանու 22.11.2022 թվականի թիվ 191-Ա որոշմամբ սարքավորումներն ընդգրկվել են Նոյեմբերյան համայնքին պատկանող գույքի ցանկում:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքին նվիրաբերվել է համայնքի քաղաքային մարզադաշտի համար նախատեսված 190 հատ նստարան, որը Նոյեմբերյան համայնքի ավագանու 27.10.2023 թվականի որոշմամբ, ընդգրկվել է Նոյեմբերյան համայնքին պատկանող գույքի ցանկում:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից թվով 6 միկրոավտոբուսներ, միջհամայնքային տրանսպորտ օգտագործելու նպատակով անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվել են համայնքին, որը ձևակերպվել է Նոյեմբերյան համայնքի ավագանու 29.11.2024 թվականի թիվ 596-Ա որոշմամբ:

«Ապրելու» բարեգործական հիմնադրամի կողմից, որպես սեփականություն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի Ռ.Սևակի փողոցում գտնվող ընդհանուր օգտագործման համար նախատեսված տրանսպորտային

միջոցների կանգառը, որի գինը կազմում է 8.827.480 (ութ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, փոխանցվել է համայնքին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեից 180,000 ՀՀ դրամի հատկացումը՝ «Ապրելու» բարեգործական հիմնադրամի հիմնադիրների հետ կազմակերպած հանդիպման հյուրասիրության ապահովման նպատակով, չի կարող գնահատվել որպես արտոնության տրամադրում կամ գույքային առավելություն, քանի որ այն իրականացվել է հանրային միջոցառման կազմակերպման նպատակով, չունի անհատական շահառու, և չի հանգեցրել որևէ անձի կամ կազմակերպության շահույթի կամ արտոնության առաջացմանը, այն պարագայում երբ հիմնադրամի կողմից Նոյեմբերյան համայնքում իրականացվել են բազմաթիվ բարեգործական միջոցառումներ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ որոշմամբ համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի կողմից համայնքային միջոցների օգտագործումը ուղղված է եղել արարողակարգային բնույթի հանրային միջոցառման կազմակերպմանը, որն ուներ համայնքային շահ և նպատակ, և որը չի պարունակել մասնավոր շահի կամ բարեգործական հիմնադրամի նկատմամբ անհիմն նախապատվություն ցուցաբերելու հատկանիշներ:

Ընդ որում, պետք է փաստել նաև, որ ի համեմատություն ներդրումների ծավալի, որ «Ապրելու» բարեգործական հիմնադրամը կատարել է Նոյեմբերյան համայնքում, որոշմամբ հատկացված գումարը շատ փոքր է, որպեսզի գործնականում դիտարկվի որպես մասնավոր շահով պայմանավորված արտոնության տրամադրում, թեև առաջին հայացքից կարող է այդպես ընկալվեր:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ Արսեն Աղաբաբյանի կողմից կայացված որոշմամբ «Ապրելու» բարեգործական հիմնադրամին որևէ առավելություն կամ արտոնություն չի տրամադրվել, և այն չի հանգեցրել շահերի բախման առաջացման՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով:

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումների և սույն գործի շրջանակներում առկա տեղեկատվության վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը, իր 2024 թվականի

մարտի 14-ի թիվ 853-Ա և 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1606-Ա որոշումների ընդունմամբ՝ 2024 թվականի փետրվարի 21-ին Նոյեմբերյան քաղաքում «Ապրելու» բարեգործական հիմնադրամի հանդիպման կազմակերպման համար նախատեսված միջոցառման ծախսերի կատարման նպատակով Նոյեմբերյան համայնքի 2024 թվականի բյուջեից 180,000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ փոխանցելով, **չի կատարել մասնավոր շահով պայմանավորված գործողություն**, որը կարող էր հանգեցնել Օրենքի 33-րդ հոդվածի պահանջների խախտմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ սույն վարույթի ընթացքումպարզված փաստական հանգամանքների համադրման և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների պարագայում ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանն իր գործողություններով չի խախտել Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի գործողություններում շահերի բախման իրավիճակի բացակայության մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ